

Գեղամ Մ. Բաղայան

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՍԱՆԿԱԽ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ (17-րդ դար - 19-րդ դարի 2-րդ կես)\***

Մուտք

Հայոց պետականության կործանմամբ ստեղծված դժնդակ պայմաններում Հայաստանի առավել դժվարամատչելի և անառիկ լեռնագավառներում ծվարած իշխանական տները կարողացան երկար ժամանակ պահպանել իրենց անկախությունն ու ինքնավարությունը: Եվ նույնիսկ 16-17-րդ դդ. թուրք-պարսկական երկարատև պատերազմների արհավիրքներն ի վիճակի չեղան լիովին արմատախիլ անել Հայոց պետականության բեկորները, որոնցում հայ բնակչությունը շարունակում էր կառավարվել իր տոհմիկ օրենքներով՝ ճանաչելով տեղի կառավարիչների գերակայությունը:

Ներկայումս մեզանում համեմատաբար լավ է ուսումնասիրված 18-րդ դարի առաջին երեսնամյակին ազատագրական շարժման խոշոր կենտրոններ դարձած Արցախ-Ղարաբաղի և Սյունիք-Ջանգեզուրի կիսանկախ մելիքությունների պատմությունը: Սակայն այսօր էլ լրացուցիչ հետազոտության կարիք են զգում Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի լեռնագավառներում մինչև 19-րդ դարի վերջերը գոյատևած մմանատիպ պետական կազմավորումները: Ավելին՝ դրանցից մի մասի հստակ աշխարհագրական տեղորոշումը, ինչպես նաև հասարակական-քաղաքական կյանքին առնչվող այլևայլ խնդիրներ դեռևս կարոտ են լուրջ ճշգրտումների:

Հարկ է նշել, որ դրանց շարքում կային զգալի տարածք զբաղեցնող և նշանակալի գորական ուժ ունեցող ուժեղ իշխանություններ, որոնք իրենց ներքին հարցերում լիակատար անկախություն էին վայելում: Նման ռազմաքաղաքական միավորումները, ինչպիսիք էին Ձեյթունը՝ Լեռնային Կիլիկիայում և Հայկական Տավրոսից հարավ տարածվող ձորահովիտներում ընկած Մասունը, հատուկ արտոնագրերով (ֆիրմաններով) ճանաչված էին Բ. Դռան կողմից: Նրանց կողքին հանդիպում էին համեմատաբար փոքր ներուժ ունեցող մելիքություններ, որոնք, որպես կանոն, ընդունում էին հարևան ավելի զորեղ մահմեդական իշխա-

Գ. (Թ) Կարի, քիվ 3 (35) հուլիս-սեպտեմբեր, 2011  
վեմ համահայկական հանդես

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 20. 06. 2011:

նությունների գերագահությունը, սակայն օգտվում էին զգալի ինքնուրույնությունից, ընդհուպ՝ որոշակի քանակությամբ ռազմական ուժեր պահելու արտոնությունից:

## 1. Ձեյթունի հայկական իշխանություն

Գտնվում էր Լեռնային Կիլիկիայում՝ զբաղեցնելով Ջահան կամ Ձեյհան (պատմ. Պյուռանոս) գետի վերին ավազանի զգալի տարածքը՝ վերջինիս բազմաթիվ վտակների ձորահովիտներով: Կենտրոնը՝ համանուն գյուղաքաղաքը, փռված էր Կիլիկյան Տավրոսի Բերիդ (Պերիտ, 3014մ) լեռնագագաթի հարավային ստորոտին, Շուղոր գետակի ձախափնյա դժվարամատչելի ձորահովտում: Ձեյթունի իշխանության պատմությունն ավելի հստակ կերպով հայտնի է 18-րդ դարի վերջին տասնամյակներից, երբ այն մուտք գործեց վերելքի և հզորացման նոր ժամանակաշրջան: Դա համընկավ հարևան Մարաշ քաղաքի (Ձեյթունից ընդամենը 40 կմ հարավ-արևելք) Չուկադիրյան (Չուկադար, Դուկադիր) և Բայազիդի (Պայազ Ալի) թուրքմեն ամիրաների իշխանության վերացման հետ, որոնք 1780 թ. ստիպված էին լիովին ընդունել օսմանյան գերիշխանությունը<sup>1</sup>:

Մարաշը դարձնելով իր հենակետը՝ Օսմանյան կայսրությունը ձեռնամուխ եղավ վերագրավելու Լեռնային Կիլիկիայում հաստատված կիսանկախ իշխանությունները, որոնցից ամենագորեղներից մեկը Ձեյթունն էր: Դրանով անտեսվում էր դեռ սուլթան Մուրադ IV-ի (1623-1640) կողմից 1627 թ. (Հիջրայի 1036 թ. շեվվալ ամսին) տեղի հայերին շնորհված բացառիկ արտոնություններն ու ինքնավարության իրավունքը հաստատող հրովարտակը<sup>2</sup>: Հատկանշական է նաև, որ հենց նույն ժամանակահատվածում՝ 18-րդ դարի վերջին քառորդին, ամբողջությամբ ձևավորվեց Ձեյթունի հայկական ավատապետությունը, որը կազմում էին Մուրենյան, Յաղուբյան, Ենիդունյան (Ենիտունյան, ավելի ուշ՝ Նորաշխարհյան) և Շովրոյան (Շովր-օղյան) իշխանական տոհմերը: Ընդ որում, այս յուրատեսակ «տետրարխիայի» (հունարեն՝ «4-ի իշխանություն») գլուխ կանգնած էր իշխանապետը, իսկ մյուս երեքը նրա օգնականներն էին: Վերոնշյալ տոհմերը բաժանել էին իրար միջև ինչպես Ձեյթուն գյուղաքաղաքն ըստ թաղամասերի, այնպես էլ իշխանության ողջ տարածքը: Ամենահին՝ Մուրենյան տոհմը, որը 19-րդ դարում ճյուղավորված էր 7 առանձին ընտանիքների, տիրում էր ինչպես Ձեյթունի միջնաբերդը հանդիսացող Կյուրեղինին (Կյուրետին) և նրան հարող Միջին թաղին, այնպես էլ գավառի հյուսիս-արևմտյան գյուղախմբերին, որոնք սփռված էին Կիլիկյան Տավրոսի ճյուղավորումները հանդիսացող Թագավորասարի (Թեքիրդաղ) և Կանթեղի (Դանդի) լեռնաշղթաների ձորահովիտներում: Մինչև 1830-ական թթ. սկիզբը իշխանապետն ընտրվել է հենց Մուրենյաններից՝ կրելով նաև «Բերդատեր» տիտղոսը<sup>3</sup>: Յաղուբյաններին էին ենթարկվում Ձեյթունի գավառի արևմտյան և հարավային հատվածները՝ բազմամարդ Ավագկալ (Մխալ) ու Ֆռնուզ (Խժոտ)


1 Տե՛ս Պողոսյան Յ. Մ., Ձեյթունի պատմությունը (1409-1921 թթ.), եր., 1969, էջ 118-119:

2 Այդ հրովարտակը գոյություն է ունեցել ընդհուպ 1884 թ. Ձեյթունի մեծ հրդեհը գտնվելով Ս. Աստվածածնի վանքում: Տե՛ս Ձեյթունցի (Մ. Սեմերճեան), Ձեյթունի անցեալն եւ ներկայէն, մասն Ա, Վիեննա, 1900, էջ 31-32: Տե՛ս նաև՝ Պողոսյան, նշվ. աշխ., էջ 108-112:

3 Տե՛ս Պողոսյան, էջ 19: Ըստ էության, այս երևույթը Կիլիկիայի Դայկական թագավորությունում առավել հզոր և ազդեցիկ իշխաններին պատկանող «բերդատեր պարոնության» պաշտոնի հեռավոր արձագանքն է:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՄՈՒԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԵԼԻՓՈԹՅՈՒՆՆԵՐՆ  
ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԼԵՆԻՆԱՅԻՆ ԿԻՆԿԻԱՅՈՒՄ

Մասշտաբ 1:2 700 000



**ՎԵՐ** համահայկական հանդես

**Գ (Թ) դասի, քիվ 3 (35) հուլիս-սեպտեմբեր, 2011**

**ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ**

գյուղախմբերով: Բուն գյուղաքաղաքում նրանց սեփականությունն էր Ղարղալար (Գարկալար) թաղամասը<sup>4</sup>:

Ամենաընդարձակ տիրույթները պատկանում էին Ենիդյունյաններին, որոնց սեփականությունն էին գավառի հյուսիսային և արևելյան գյուղախմբերը՝ Մարի-գյուգե, Ալիշար, Մալաթճա, Ընկուգեկ (Էնգիգեկ), Բերդուս-Գարամանը գլխավոր կենտրոններով, ինչպես նաև գյուղաքաղաքից հարավ, մինչև Ջահան ընկած բնակավայրերը, այդ թվում՝ Արեգինի (Ալաբաշ) հարուստ գյուղախումբն իր ավելի քան չորս տասնյակ գյուղակ-«թաղերով», Ջերմուկի դաշտում գտնվող միջնադարյան Ամենավիրկչի վանքը և շրջակա, քաջասիրտ բնակիչներով հռչակված Ավագենք ու Գալուստենք գյուղերը: Ենիդյունյաններին էր նաև Ջեթունի Վերին թաղը<sup>5</sup>: Վերջապես, Շովրոյանները տիրում էին գյուղաքաղաքի Բոզբայիր (Պոզպայիր) թաղին, ինչպես նաև Շենքեք (Շենբակ) լեռան հյուսիսային կողմում գտնվող որոշ գյուղերի<sup>6</sup>: Հանդես գալով համեմատաբար ավելի ուշ շրջանում (1800 թ.), այս տոհմը կարճ ժամանակ անց այնքան հզորացավ, որ արդեն 1830-ական թթ. նրա ներկայացուցիչները յուրացրին իշխանապետի կոչումը<sup>7</sup>:

1860-ական թթ. Ջեթունի հայկական իշխանությունն իր 3 գյուղախմբերով («քեհյայություններով») ուներ շուրջ 36 հզ. բնակիչ, որից 27.5 հզ.-ը (76.4%) քրիստոնյա հայեր էին, իսկ մյուսները, չնչին բացառությամբ, 17-18-րդ դդ. զուլկադիրյան բռնապետերի պարտադրանքով կրոնափոխված, բայց մայրենին պահպանած մահմեդական հայեր, որոնք «թուրք» էին հորջորջվում<sup>8</sup>: Ընդ որում, Ջեթունի իշխանների ռազմական ուժը կազմում էր 7-8 հզ. մարտիկ<sup>9</sup>, այսինքն՝ գրեթե ողջ չափահաս արական բնակչությունը: Եթե նկատի ունենանք, որ պատերազմի պահին զենքի էին դիմում նաև զեյթունցի արիասիրտ կանայք և օրիորդները, ապա պարզ կդառնա, որ հայկական իշխանության ամբողջ բնակչությունը, փաստորեն, մարտունակ էր և հմուտ՝ զենքի գործածության մեջ:

Հայկական իշխանության երկարատև գոյությունն ապահովեց Լեռնային Կիլիկիայի հիմնական մասում հայ տարրի գերակշիռ առկայությունը: Ուշագրավ է, որ այն արևմուտքից և հարավից շրջապատված էր հոծ հայկական «շերտով», որը Կոկիսոնի դաշտից, Կապանի և Անդրունի (պատմական Յախուտ) գավառակներից ձգվում էր մինչև Մարաշ՝ ընդգրկելով տասնյակ հայաբնակ գյուղեր և ավաններ<sup>10</sup>: Այս հանգամանքը, ինչպես նաև հարևան առանձին թուրքմե-

4 Յաղուբյան իշխանական տոհմը սերում էր հռչակավոր Խոյ Դակոբից: Տես նաև՝ Աղասի, Ջեթուն եւ իր շրջակաները, Պեյրուք, 1968, էջ 15, 21: Տես նաև՝ Պողոսյան, էջ 56-57:

5 Այս տոհմի հիմնադիրը Ջեթունից արևմուտք ընկած Կապան (Մեյրենչիկ կամ Մարիամաշեն) հիմնավորց բերդին տիրող Ապարոյան Դաջի-Սահակ իշխանն էր, որը, չհանդուրժելով Կոկիսոնի (Գյոքսուն) Աբազ-օղլու ծորապետի («ղերբեյի») բռնությունները, 1790 թ. տեղափոխվեց Ջեթուն գյուղաքաղաք: Տես Աղասի, էջ 13-15: Տես նաև՝ Պողոսյան, էջ 58:

6 Տես Աղասի, էջ 21: Տես նաև՝ Պողոսյան, էջ 56-57:

7 Տես Պողոսյան, էջ 56-58, 62:

8 Տես Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ-Ս. Ղազար, 1885, էջ 180: Տես նաև՝ Աղասի, էջ 11, 17 նմ: Որպես կանոն, հայախոս մահմեդական բնակչությամբ գյուղերն ընկած էին Ջեթունի իշխանության ծայրամասային թուրքմենական ծորապետություններին անմիջապես սահմանակից շրջաններում: Ի դեպ, Ջեթունին հարավ-արևելքից հարող Բերդուսի (Բերթիզ) գյուղախմբի շուրջ չորս տասնյակ գյուղերի բնակիչները նույնպես նախկին հայեր էին, որոնք 19-րդ դարում դեռևս պահպանել էին մայրենին: Տես Աղասի, էջ 17: Տես նաև՝ Գալուստեան Գր. Դ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Ջեթուն, Նիւ Եօրք, 1934, էջ 78-80:

9 Տես Ալիշան, էջ 190:

10 Տես Գալուստեան, էջ 40-59, 60-66 նմ:

նական ձորապետությունների («ղերբերությունների»)<sup>11</sup> հետ հաճախակի դաշնակցային հարաբերությունները հնարավորություն ընձեռեցին Ձեյթունի հայկական իշխանությանը իր գոյությունը պահպանել մինչև 19-րդ դարի 60-ական թթ. կեսերը: Լեռնային Կիլիկիայում յուրահատուկ կարգավիճակ են ունեցել նաև Ձեյթունից հյուսիս-արևմուտք ընկած և Սեյհան (Սիհուն, պատմ. Սարոս) գետի վերին ավազանը զբաղեցնող Հաճըն (պատմ. Հարգան) գավառի հայերը: Սակայն, ի տարբերություն Ձեյթունի, տեղի իշխանական տները ճանաչում էին Կիլիկիայի այս մասում իշխող Կոզանյան (Կոզան-օղլու) ձորապետների գերագահությունը՝ դիտվելով որպես վերջիններիս հայ ներկայացուցիչներ<sup>12</sup>: Իրենց ինքնուրույնությունը Հաճընի իշխանները պահպանեցին մինչև 1842 թ., իսկ թուրքմենական ձորապետությունների ոչնչացումից (1862-1865 թթ.) հետո նրանք ազդեցիկ դիրք էին գրավում Հաճընի կազայի (գավառակ) կառավարման մեջ, որը 1871 թվականից վարչականորեն գտնվում էր Ադանայի վիլայեթի կազմում<sup>13</sup>: Հաճընի հայկական իշխանական տոհմերը 10-ն էին, որոնցից աչքի էին ընկնում Բահադրյանները (Պահատրյան), Թուրսարգիսյանները, Բեջբեյանները (Բեճեպյան), Շըխրտարմյանները, Ենիդունյանները ևն:

## 2. Սասունի հայկական իշխանություն

Բուն Արևմտյան Հայաստանի տարածքում ամենաընդարձակ և ուժեղ իշխանությունը Սասունն էր: Մինչև 18-րդ դարի սկիզբն այն զբաղեցնում էր Հայկական Տավրոսի հարավային ձորագավառները, արևմուտքում՝ Կողբա (Խուլվի) լեռներից մինչև Ծովասար և Մարաթուկ լեռնագագաթներն արևելքում, իսկ հարավում հասնում էր մինչև Բաթմանաջուր (պատմ. Քաղիթթ) գետի նշանավոր Փրեբաթման կամրջի շրջանը: Իշխանության ավանդական հիմնադիրը համարվում է դեռ 15-րդ դարի կեսերին Բարձր Հայքից Սասուն տեղափոխված Հուր իշխանը, որից էլ սերում էին մինչև 20-րդ դարի սկիզբը Սասուն մի շարք գավառակներում իշխող բազմաթիվ իշխանական ընտանիքները (տները)<sup>14</sup>: Սակայն 17-18-րդ դդ. Հյուսիսային Միջագետքից քրդական նորանոր ցեղերի չընդհատվող ալիքը նկատելիորեն կրճատեց Սասունի հայկական իշխանության տարածքը: Ընդ որում՝ դրանից առաջ արդեն հայ իշխանները կորցրել էին Կողբի (Խուլվի) և Հազգոյի (Հզու) գավառները, իսկ 18-րդ դարի սկզբին՝ նաև Բաթմանաջուրի Կողբածոր (Խուլվի) վտակի վերին ավազանը: Սրանով հանդերձ, Հուրյան իշխաններին հաջողվեց պահել Սասունի կենտրոնական և հյուսիսային մասերը՝ Վերին Սասունն իր Գավառ, Շատախ, Փսանք կամ Քաջարենց, Տավորիկ, Իշխանածոր (Իշխնծոր) գավառակներով (գյուղախմբերով): Այս հատվածում ամրապնդված հայկական իշխանությունն Օսմանյան տերության կողմից վերջնականապես ճանաչվեց 17-րդ դարի սկզբին: Որպես Բ.Դռան ներկայացուցիչ, հարևան Խուլվիի հուրյունների (քրդական իշխանության) Շուղբ բերդի ազդեցիկ տիրակալ Ավդալ-բեկը 1604 թ.

11 Հարկ է մասնավորապես առանձնացնել Ձեյթունի գավառից հարավ՝ Ջահանի (Ջեյհան) միջին ավազանի աջափնյակն ընդգրկող Գովտուի շրջանի թեջիրցիների (թեջիրլի), ինչպես նաև Հաճընի Կոզանյանների (Կոզան-օղլու) իշխանությունները: Տե՛ս Աղասի, էջ 109-113:

12 Տե՛ս Պողոսեան Յ. Պ., Հաճընի ընդհանուր պատմությունը եւ շրջակայ Գօզան-տաղի հայ գիւղերը, Lou Անճելըս, 1942, էջ 158-159:

13 Տե՛ս Պողոսեան, նշխ. աշխ.:

14 Գոլոյի և նրա ժառանգների նախնական կենտրոնը Հավկոնք (Հավկունք) ավանն էր՝ Տավորիկիցիտուր գետի ձախակողմյան Հոսներ վտակի ափին: Տե՛ս Սեյլան (Արշակ Մատոյան), Սասուն, Եր., 1990, էջ 45:

(Հիջրայի 1013 թ. նիսան ամսին) Հոլոյի որդի Գորգեին (Գևորգ) հատուկ հրովարտակով ճանաչեց Վերին Սասունի անկախ իշխան՝ «միր»։ Ուշագրավ է, որ այս փաստաթուղթն իր իրավական ուժը չկորցրեց ընդհուպ 1856 թ. սուլթան Աբդուլ-Մեջիդի «Հաթթը հյունայունի» հրապարակումը և պահվում էր Սասունի կենտրոնը համարվող Գելիեզուզան (Ընկուզածոր) ավանում<sup>15</sup>։

Փաստերը ցույց են տալիս, որ Սասունում եղել են մի շարք իշխանական ընտանիքներ։ Գերակա էին համարվում վերոհիշյալ Հոլոյի անմիջական ժառանգները՝ Հոլոյանները, որոնք տիրում էին կենտրոնական Գավառ, Շատախ (վերջինիս կազմում և՛ Գելիեզուզանը), Ծովասար և Իշխանածոր (Իշխնծոր) գավառակներին<sup>16</sup>։ Ավելի հարավ, Տավրոհիկիջուր գետի աջափնյակում ընկած Տավրոհիկ (Դավրոհիկ, Քարակն, պատմ.՝ Ասպակունյաց ձոր) գավառակում իշխում էին ժամանակին Ձեյթունից Սասուն տեղափոխված Ծուռ Ղազարի ընտանիքից սերված իշխանները<sup>17</sup>։ Տավրոհիկից արևելք՝ մինչև Սասնաջուր գետը տարածվող Փասնք (Բուսանք) գավառակի Քաջարենց իշխանների կենտրոնն էր հռչակավոր Գումոց կամ Մատին Առաքելոց վանքը<sup>18</sup>։ Ի դեպ, վերջինս դեռ զարգացած ավատատիրության ժամանակ Հայաստանում լայն տարածում ստացած «պարոնտերություն» հիշեցնող երևույթ էր, երբ որևէ գավառի հոգևոր առաջնորդը միաժամանակ դիտվում էր նաև աշխարհիկ պետ։ Նշանավոր են եղել Սասունի իշխանության հարավային դարպասը համարվող Բերմ (Պերմ) ավանի իշխանները՝ Բերմաջիք<sup>19</sup>։ Սասունում հայտնի էր նաև Ասեցիների տոհմը (Ասի կամ Ասուբերդավանի անունից), որը մինչև 20-րդ դարի սկիզբը պահպանել էր իր ինքնուրույնությունը Մարաթուկի հարավային ստորտից բխող Կուսգետ գետակի (Խարզանի մի ճյուղը) ակունքների շրջանում<sup>20</sup>։ Հարկ է նշել, որ անգամ քրդական իշխանությունների կազմի մեջ մտնող Խուլվիի և Խիանքի գավառակներում, ընդհուպ 19-րդ դարի վերջը պահպանվել էին առանձին իշխանական ընտանիքներ, այն տարբերությամբ միայն, որ դրանք անմիջապես ենթակա էին տեղի մահմե-

15 Այդ հրովարտակի պատճենը գոյություն ուներ ընդհուպ 19-րդ դարի վերջերը՝ Գելիեզուզանի իշխանական տոհմի ներկայացուցիչ ռես Պետոյի տանը։ Տես Սեյլան, էջ 48։ Գելիեզուզանը Սասունի հայկական իշխանության կենտրոն դարձավ 18-րդ դարի սկզբին, երբ քրդական հետզհետե ուժեղացող ճնշմանը տեղի տալով, Կորքի (Խուլվի) հայ իշխանները հարկադրված թողեցին իրենց կենտրոնը Շենը (Գաբով արտ) և տեղափոխվեցին այստեղ։ Տես Սեյլան, էջ 51։ Տես նաև Սասունի Կ., Պատմութուն Տարոնի աշխարհի, Պեյրուք, 1957, էջ 369։

16 Հարկ է նկատի ունենալ, որ Սասունի խիստ լեռնային, կտրտված մակերևույթի պատճառով, գավառի խոշոր գյուղերը, որպես կանոն, կազմված էին մի քանի, հաճախ՝ տասնյակից ավելի, գյուղակ-«թաղերից»։ Այսպես, Գելիեզուզանը կազմված էր ավելի քան 3 տասնյակ այդպիսի «թաղերից»։ Դրանք ուլունքի նման շարված էին Տավրոհիկիջուրի աջակողմյան Պայթող աղբյուր (Կանիբախջին) բազկի երկայնքով շուրջ 30 կմ երկարություն ունեցող ձորում։ Տես Պետոյան Կ., Սասունի և Տարոնի պատմաաշխարհագրական տեղադրությունը, Եր., 2005, էջ 18-19։ Նման «գյուղակային» կառուցվածք ունեին նաև Տավրոհիկը, Ալիանքը, Սեմալը, Կուսգետը, Իշխանածորը, Արտկունքը ևն։

17 Մեկ այլ ավանդության համաձայն՝ տավրոհիկցի իշխանները սերուն են ծագումով դարձյալ զեյթունցի Սուբիասից, որը նախապես հաստատվել էր գավառակի Կտանք գյուղում։ Տես Պետոյան, էջ 43։ Գելիեզուզանի նման, Տավրոհիկը և առանձին գյուղակ-«թաղերից» կազմված գյուղախումբ էր եզուտուն (Այգետուն, որի մասն էր վերոհիշյալ Կտանքը) կամ Բուն Տավրոհի կենտրոնական ավանով։ Իշխանամիստ էին համարվում նաև Սպաղանք (Ասպականք), Փուրխ, Հարթք, Արտխոնք «թաղերը»։ Տես Սեյլան, էջ 73-74։ Սասունի, էջ 390-392։ Տես նաև Իգիթբաշի, Սասուն, «Արծազանք», Թիֆլիս, 1894, N 150, էջ 1-2։

18 Տես Սեյլան, էջ 107-108։

19 Տես Սեյլան, էջ 79-81։ Բերմի հայերը հռչակված էին որպես «կորիճ» և խիզախ մարտիկներ։ Տես Սմբատ Բիւրատ, Երլտըզէ Սասուն, Կ. Պոլիս, 1910, էջ 616)։

20 Տես Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Գ հատոր, Թեհրան, 1982, էջ 32-33։ Հատկանշական է, որ Ասեցիները, ինչպես նաև հարևան Կուսգետի հայերը համարվել են ինքնուրույն, ազատ «աշիբեթ» կամ ցեղ։ Տես «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, N 13, էջ 6։ Տես նաև Սեյլան, էջ 97-98։

դական կառավարիչներին<sup>21</sup>: Ի դեպ, սա հիշեցնում էր Ջեյթունի իշխանության սահմանների երկայնքով ձգվող հայաբնակ «շերտը», որով լրացուցիչ պաշտպանական գոտի էր ձևավորվել ինչպես վերջինիս, այնպես էլ Սասունի համար:

Այսպիսով, Վերին Սասունն ընդգրկող հայկական իշխանությունը 19-րդ դարի 2-րդ կեսին ուներ 50-60 գյուղեր, որոնք, չնչին բացառությամբ, զուտ հայաբնակ էին և մինչև 1876 թ. ենթարկվում էին հայ իշխաններին: Ճիշտ է, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո տեղի կառավարիչները դադարեցին կրել «միր» տիտղոսը, սակայն որպես ինքնուրույն իշխաններ շարունակում էին տիրել Վերին Սասունին՝ մինչև 20-րդ դարի սկիզբը: Այդ մասին ուշագրավ փաստեր կան 19-րդ դարի վերջին Վանում ռուսական փոխխուպատոս Ա. Կոլյուբակինի մոտ, որի խոսքերով՝ սասունցի հայերն ունեին «առանձնահատուկ կարգավիճակ» և «գեներով պաշտպանում էին իրենց իրավունքները քրդերից»<sup>22</sup>: Անգամ 1894 թ. և 1904 թ. օսմանյան կանոնավոր բանակի ու քրդական համադիներների կողմից Սասունի իշխանության տարածքում կազմակերպված վայրագ կոտորածները, որոնց զոհ գնացին հազարավոր հայեր, չընկճեցին քաջասիրտ լեռնականներին, որոնք, փաստորեն, մինչև 1915 թ. Մեծ եղեռնը խիստ ձևական էին ընդունում օսմանյան վարչակարգը<sup>23</sup>: Ցավոք, Սասունի հայկական իշխանության ռազմական ուժի մասին հայտնի են կցկտուր, ոչ լիարժեք տվյալներ: Որոշ տեղեկությունների համաձայն՝ 19-րդ դարի 90-ական թթ. սկզբին միայն Շատախի և Գավառի մարտիկների թիվը հասնում էր 1000, իսկ Տավրիիկինը՝ 500 մարդու<sup>24</sup>: Եթե հաշվի առնենք, որ Վերին Սասունի հայ բնակչության թիվը նույն ժամանակահատվածում կազմում էր շուրջ 20 հազար մարդ, ապա կարելի է ենթադրել, որ ամբողջ Սասունի իշխանությունն էլ վիճակի էր մարտի դաշտ դուրս բերել մինչև 4-4.5 հազար զինվոր:

### 3. Շատախի և Մոկսի մելիքությունները

Միմյանց հարևան այս 2 հայկական իշխանություններն ընկած էին Վանա լճի հարավային ափերին զուգահեռ ձգվող Ռշտունյաց (Շատախի) լեռներից հարավ՝ Արևելյան Տիգրիս կամ Ջերմ (Բոհտան) գետի վերին ավազանում: Վարչականորեն 17-րդ դարից մինչև 19-րդ դարի 1-ին կեսը լինելով հզոր Հաքքարիի քրդական հուբյունեթի կազմում, տեղի հայ մելիքներն օգտվում էին զգալի ազատությունից և արտոնություններից: Մոկսը Ջուլամերկի (Հաքքարիի կենտրոնը - Գ.Բ.) խաների գերակայությունն ընդունեց դեռ 16-րդ դարի 1-ին կեսին<sup>25</sup>: Ինչ վերաբերում է Շա-

21 Իշխաններ կային վերոհիշյալ գավառակների բոլոր հայաշատ գյուղերում (Փասուր, Գեղին, Էհուր, Սաղտուն, Ընձքար ևն): Սասունի հայկական իշխանական ընտանիքների մասին ավելի մանրամասն տես Սասունի, էջ 390-392:

22 Колобакин А. Т., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, том 1, часть 1, Тифлис, 1888, с. 149.

23 Տե՛ս Аверьянов П. И., Этнографический и военно-политический обзор азиатских владений Османской империи, Санкт-Петербург, 1912, с. 49. Հատկանշական է այն փաստը, որ Վերին Սասունում թուրքական իշխանություններին առաջին անգամ հաջողվեց կանոնավոր զորամասեր հաստատել 1904 թ. ապստամբության ճնշումից հետո միայն: Դրանք տեղակայվեցին Գելիեզուզան, Սենալ, Տափըկ, Էգուտուն և Իշխանաձոր գյուղերում կառուցված զորանոցներում: Ընդ որում, 1908 թվականից հետո թուրք զինվորները հիմնականում հեռացվեցին նշված բնակավայրերից:

24 Տե՛ս «Սասուն: Նրա նկարագրությունը, բնակիչները եւ նոցա բարք ու վարքը», «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1894/95, գիրք Ա, էջ 80-83:

25 Տե՛ս Ինճիճեան Դուկաս, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն առաջին, հատոր Ա, Վենետիկ - Ս. Ղազար, էջ 161:

տախին, ապա այն, գտնվելով Հաքքարիի անմիջական սահմանակցությամբ, ստիպված էր ավելի վաղ ենթարկվել վերջինիս քուրդ ավատատերերին<sup>26</sup>: Մեզ հասու նյութից պարզվում է, որ Մոկսի և Շատախի հայկական մելիքությունների միջև գոյություն են ունեցել որոշակի կարգավիճակային տարբերություններ: Առաջինը, որն ամբողջովին ներառում էր Արլ. Տիգրիսի (Բոհոտան) աջակողմյան Մոկսաց ջուր (պատմ. Որբ) վտակի ավազանը, հայ-քրդական համատեղ իշխանություն էր: Քուրդ բեկին (նամիրի ցեղից)<sup>27</sup> զուգահեռ այստեղ եղել է նաև հայ մելիք, ըստ Ղ. Ինճիճյանի՝ «գլխատր հրամանատար», որը «եղեալ հրամանա ճուլամերիկի պէլին, զամենայն իշխանութիւն ի գործ ածէ բաց ի յարեան հեղութենէ»<sup>28</sup>: Փաստորեն, հայերի ձեռքում էր կենտրոնացած գավառի քաղաքացիական իշխանությունը: Մի փոքր այլ էր Մոկսի արևելյան հարևան Շատախի իրավական դրությունը: Գրավելով ավելի ընդարձակ տարածք, որը զբաղեցնում էր Արլ. Տիգրիսի Սևտիկնաջուր, Կադայի, Եղնաձոր վտակների ձորահովիտները, Շատախը, ըստ էության, մի քանի հայկական մելիքությունների դաշնություն էր: Շատախի ընդհանուր կենտրոնը Արլ. Տիգրիսի ձախ ափին կառուցված համանուն բերդն էր (այժմ՝ Հեշատ): Ենթակայությունը Ջուլամերիկին արտահայտվում էր նրանով, որ վերջինիս խանն այստեղ ուներ իր ներկայացուցիչն ի դեմս Հաքքարիի Շամրո գահերեց տոհմի կրտսեր անդամներից նշանակված էմիրի (տեղական բարբառով՝ «ամբրրա»): Վերջինս բնակվում էր Շատախի բերդում՝ փոքրաթիվ թիկնագործ (40-50 մարդ), որը կազմված էր Հաքքարիի քրիստոնյա ասորիներից (Թխարի ցեղից)<sup>29</sup>: Թեև էմիրը համարվում էր գլխավոր զինվորական հրամանատարը, սակայն տեղի զինված ուժերն իրականում բաղկացած էին հայ մելիքների ջոկատներից<sup>30</sup>: Այս առումով, Շատախի հայերը վայելում էին ավելի մեծ ինքնուրույնություն, քան Մոկսում: Հատկանշական է, որ քրդական ավատատիրական տոհմերի պատմիչը՝ Շարաֆ-խան Բիթլիսին, ոչինչ չի ասում Շատախում հաստատված որևէ քրդական ընտանիքի մասին: Ընդ որում, տեղի հայ ավատատերերը, փաստորեն, որոշակի քանակությամբ զորաջոկատ են տրամադրել Վանի թուրք փաշայի բանակին (թե՛ Շատախը և թե՛ Մոկսը մտնում էին Վանի էյալեթի մեջ - Գ. Բ.), որը մարտի էր գնում վերջինիս աջաթևյան խմբավորման կազմում<sup>31</sup>: Կարևոր է նաև այն փաստը, որ Շատախի հայ մելիքների պաշտոնը ժառանգական էր և ցմահ<sup>32</sup>: Գավառի մելիքական տոհմերից գահերեցը համարվել է բուն բերդաքաղաքում, ինչպես նաև՝ շրջակա մեկ տասնյակից ավելի «մզրա»-ազարակներում բնակվող Արծրունիների հեռավոր շառավիղները դիտվող Շատախցիների (տեղական բարբառով՝ «Շատըխցեր») ընտանիքը<sup>33</sup>: Հայտնի էին նաև Շատախի

26 Տե՛ս Лисициан С. Д., Историко-этнографические очерки Шатаха, «Известия Кавказского Историко-археологического института», Тифлис, 1927, с. 73.

27 Տե՛ս Шараф-хан ибн Шамсаддин Бидлиси, Шараф-намэ, т. 1, Москва, 1967, с. 154, 158.

28 Ինճիճյան, նույն տեղում:

29 Տե՛ս Лисициан, с. 73.

30 Տե՛ս նույն տեղում, с. 75.

31 Տե՛ս (Evlia Çelebi), Evliya Çelebi seyahetnâmesi, cilt 4, Istanbul, 1314 (1896), s. 179-180.

32 Տե՛ս Лисициан, с. 74.

33 Տե՛ս Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Շ. Կուժիկյանի ֆոնդ, 3ա, տետր 13, թ. 6բ-7ա: 20-րդ դարի սկզբին Շատախի «մզրա»-ներում դեռ ապրում էին մելիքներից սերվող մի շարք ընտանիքներ («տներ»), որոնցից էին «Աղիկի տունը», «Ազրզի տունը», «Մախասի տունը» և ուրիշներ: Տե՛ս Лисициан, с. 77-78.

բերդից հարավ-արևմուտք, Արլ. Տիգրիսի աջակողմյան Սոքանց ձորում գտնվող Կաղպի (Կաղբի) ավանի մելիքները, որոնց մեջ առավել նշանավորը «Պիրումի տունն» էր<sup>34</sup>: Թերևս առանձին մելիքություն է եղել նաև Կաղպիից հյուսիս ընկած Տղասպար (Տասպար) ավանում, որի մելիքին ավանդաբար վերագրվում էր Արլ. Տիգրիսի վրա գտնվող հայտնի Խոլքսան կամրջի կառուցումը<sup>35</sup>: Փաստերը, սակայն, ցույց են տալիս, որ հայ մելիքների իշխանությունը չի տարածվել Շատախի ողջ տարածքում: Քրդերին հաջողվեց բավական վաղ հաստատվել գավառի հարավ-արևելքում՝ Արլ. Տիգրիսի ձախակողմյան Չռելաջուր վտակի հովտում գտնվող Չռել (Չռայլ) հինավուրց բերդում՝ դուրս մղելով տեղի հայ իշխողներին<sup>36</sup>: Շատախի հարավ-արևմտյան մասը, որը կենտրոնի՝ համանուն բերդի, անունով կոչվում էր Արամշատ կամ Արմշատ (տարբերակները՝ Արդամուշտ, Կավաշի)<sup>37</sup>, մինչև 19-րդ դարի 1-ին կեսը ենթարկվում էր հարևան Ջեզիրե-Բոհսանի հուլյաններին՝ վարչականորեն մտնելով Դիարբեքիի էյալեթի մեջ:

Մոկսի և Շատախի հայկական մելիքությունները մեծ վերելք ապրեցին 18-րդ դարի 2-րդ կեսին: Հատկապես հզորացավ Մոկսը, որի մելիք Հովհիկը (Հովհաննես) իր ձեռքում էր կենտրոնացրել նաև ռազմական իշխանությունը և, լիովին կախման մեջ դնելով տեղի քուրդ բեկերին, «ըստ կամաց իրոց փոփոխէր գնոսս, եւ զայլ բազում իշխանութիւնս ցուցանէր»<sup>38</sup>: Ի հակակշիռ քուրդ ավագանու կենտրոնը հանդիսացող Մոկս բերդաքաղաքի, մելիք Հովհիկն իր նստավայրն էր դարձրել վերջինից հարավ՝ Մոկաց ջրի վտակ Հառնանց գետակի հովտում գտնվող Աղին (Հաղին) ավանում կառուցված բերդը: Դ. Ինճիճյանի տեղեկությունները պարզորոշ ցույց են տալիս, որ հայ մելիքը գրեթե դարձել էր Հաքքարիի խանի «փոխանորդը», և պետք է ենթադրել, նրա քաղաքական ծրագրերի մեջ եղել է քրդական ազդեցությունից լիովին ազատ հայկական իշխանության ստեղծումը: Ի դեպ, նկատի պետք է ունենալ նաև այն հանգամանքը, որ գրեթե միաժամանակ Շատախում հզորացել էր մելիք Մալխասը (Մարխաս): Մոկսի օրինակով վերջինս իր կենտրոնատեղին էր դարձրել Շատախի բերդից 2 կմ հարավ ընկած Առոսկի (Հառոսկի) մզրայի մոտ կառուցած բերդը (ավերակները տեսանելի էին 20-րդ դարի սկզբին)<sup>39</sup>: Ցավոք, որևէ փաստ 2 հայ մելիքների հնարավոր համագործակցության մասին մեզ հայտնի չէ, սակայն Դ. Ինճիճյանի այն վկայությունը, որ ինչպես Շատախում, այնպես էլ Մոկսում, հայերն արգելել էին քրդերի մուտքը՝ «ոչ թողուն քուրտ պէյից նստիլ աստէն»<sup>40</sup>, խոսում է հայկական մելիքությունների ինքնուրույնության ամրապնդման մասին: Ցավոք, մելիք Հովհիկի դավադիր սպանությունը, որին հետևեց հարևան Շիրվանի և Խիզանի քուրդ բեկերի կողմից Աղինի բերդի ավերումը<sup>41</sup>, կասեցրեց հայկական այս մելիքությունների հետագա զորեղացումը: Ավելի ուշ, Հյուսիսային Իրաքից (Մոսուլ, Չախո) նորանոր վաչկատուն քրդական ցեղերի ներթափանցումը Հարավային Հայաստան, որը հմտորեն օգտագործվեց

34 Տե՛ս Лисициан, նույն տեղում:  
 35 Տե՛ս Յայաստանի պատմության պետական թանգարան, Արխիվ, գործ No 80, ք. 165:  
 36 Տե՛ս Лисициан, с. 78: 20-րդ դարի սկզբին Ջռելում և շրջակայքում պահպանվել էին երբեմնի հայ կյանքի հիշատակները, որոնցից էր Ջռելավանքը (Սարի Սբ. Գևորգ):  
 37 Տե՛ս Шараф-хан, с. 177: Տե՛ս նաև Ազիզեան Մ., Գերոսական Շատախի Արմշատ գիւղը, Պէյրուք, 1974, էջ 8-9:  
 38 Ինճիճեան, էջ 162:  
 39 Տե՛ս ԳԱԹ, Շ. Կուժիկյանի ֆ. 3ա, տ. 13, ք. 6բ:  
 40 Ինճիճեան, էջ 163:  
 41 Տե՛ս Ինճիճեան, էջ 162:

Հաքքարիի քուրդ կառավարիչների կողմից, աստիճանաբար թուլացրեց հայ մե-  
լիքների ռազմական հզորությունը: Տեղի հայկական մելիքությունների համար  
խիստ բացասական հետևանքներ ունեցավ նաև Բոհտանի (Ջեզիրե) հետ մշտա-  
կան հակամարտությունը<sup>42</sup>:

Շատախի և Մոկսի հայկական մելիքությունների համար կործանարար էր  
հատկապես քրդական հույրումեթների դեմ 1846-1849 թթ Օսմանյան կայսրու-  
թյան կազմակերպած ռազմական արշավանքը, որի ընթացքում ավերվեցին կամ  
ամայացան տասնյակ հայկական բնակավայրեր, իսկ բնակչությունը ոչնչացվեց  
կամ գաղթեց (տեղի հայ մելիքները հարել էին քուրդ ավատատերերին, որոնց  
գլուխ կանգնած էր Բոհտանի նշանավոր ցեղապետ Բադրխանը): Այնուամենայ-  
նիվ, մինչև 19-րդ դարի 60-70-ական թթ. մելիքական ընտանիքների առանձին ներ-  
կայացուցիչներ պահել էին իրենց ազդեցիկ դերը՝ ձգտելով վերականգնել երբեմնի  
հայկական իշխանությունը<sup>43</sup>: Մասնավորապես հիշատակելի է Մահտեսի Սահա-  
կը, որը լինելով Մ. Խրիմյանի գաղափարակիցը, փորձում էր Շատախի նոր կենտ-  
րոնը՝ Թաղը, վերածել հայոց ազատության նոր կենտրոնի: 1868 թ. թուրքական  
իշխանությունների ցուցումով այս հայրենասեր մարդը դարձավ քուրդ  
ավազակապետ Քյոռ Ամեի դավադրության զոհը, իսկ նրա բերդամասն քարա-  
կերտ տունը վերածվեց կառավարչատան: Պահպանվել են նաև տեղեկություններ  
Մոկսի վերջին հայ մելիք Նեթոյի մասին, որին դավադրաբար սպանել է տեղի  
քուրդ Ավտալ (Աբդալ) բեկը<sup>44</sup>:

#### 4. Վանի և Էրզրումի էյալեթների հայկական մյուս մելիքություններն ու ինքնավար համայնքները

Արևմտյան Հայաստանի տարածքի այլևայլ վայրերում պահպանվել էին  
նաև զգալի թվով մանր ու համեմատաբար փոքր ընդգրկում ունեցող մելիքություն-  
ներ: Հարկ է նշել, որ դրանց հիմնական մասը գտնվում էր Վանի էյալեթի կազմում:  
Նմանատիպ իշխանություններից առանձնանանում էր Տարոնի հյուսիս-  
արևմտյան հատվածում՝ Արևելյան Եփրատից (Արածանի-Մուրադ) մինչև Ին-  
նակնյան կամ Հավատամքի (Շարաֆադդինի) լեռնապարն ընկած տարածքն  
ընդգրկող **Բաղլուի մելիքությունը**, որի մեջ էր մտնում նաև հռչակավոր Ս. Կարա-  
պետի վանքն իր շրջակայքով: Արևմտահայ նշանավոր հասարակական-քաղա-  
քական գործիչ Գեղամ Տեր-Կարապետյանի (Մշո Գեղամ) տեղեկությունների հա-  
մաձայն՝ Բաղլուի հայ մելիքները 17-18-րդ դարերում դաշնակցել են Վանին  
սահմանակից Դիարբեքիի էյալեթի կազմում գտնվող Գենջի (Կինճ) և Ճապադ-  
ջրի դմլիկական (զազա) ուժեղ հույրումեթների հետ՝ անհրաժեշտության դեպքում  
մարտադաշտ հանելով մինչև 500 զինվոր<sup>45</sup>: Հատկանշական է, որ 1830-ական թթ.  
հենց Բաղլուի մելիքության ներկայացուցիչ Կեմիկի<sup>46</sup> Ալեքսանն էր, որ հարևան  
Ավրան հայաբնակ ավանի ներկայացուցիչ Տոնիկ Քեհյայի որդի Սարգսի

42 Տե՛ս Лисициан, с. 75-76, 78-79:

43 Տե՛ս Վասպուրական: Վան-Վասպուրականի Ապրիլեան հերոսամարտի տասնեփնգամեակին առթիւ.  
1915-1930, Վենետիկ-Ս. Ղազար, 1930, էջ 381-382:

44 Տե՛ս ճամբորդ, Մոկաց կեանքից, «Մուրճ», Թ., 1903, N 12, էջ 79-80:

45 Տե՛ս Տեր-Կարապետյան Գ. (Տատրակ), Տարոնի աշխարհ, Եր., 1995, էջ 349:

46 Կեմիկը Բաղլուի անմիջական հարևան գյուղերից էր և 19-րդ դ. կեսերին բավական բազմամարդ  
բնակավայր էր:

աջակցությամբ համառ պայքար մղեց Մշո գավառ թափանցած և իշխանությունների օժանդակությամբ այստեղ հաստատվելու փորձեր ձեռնարկող մլանցի քուրդ քոչվորների դեմ: Ու չնայած նախնական հաջողություններին, պայքարն ավարտվեց հայերի պարտությամբ, ինչը ճակատագրական եղավ նաև Բաղլուի մելիքության համար, որը, փաստորեն, դադարեցրեց իր գոյությունը<sup>47</sup>: Հատկանշական է, սակայն, որ մելիքության անկումից հետո էլ վերջինիս կենտրոնը պաշտոնական փաստաթղթերում շարունակում էր կոչվել **Բաղլու-մելիք**, որի երբեմնի կարևոր նշանակության առիավատչյան էին մինչև 1915 թ. պահպանված Ս. Աստվածածին և Ս. Հրեշտակապետ գույգ կանգուն եկեղեցիները<sup>48</sup>:

Հայկական ավելի փոքր մելիքություններ են եղել նաև Մուշի հարևան **Բուլանուխի (Բուլանըխ)**, **Արձեշի**, **Արծկե-Ալջավազի (Ադիջևազ)** և **Խնուսի** տարածքում: Բուլանուխում 18-19-րդ դարերում հայտնի էր Արևելյան Եփրատի (Արածանի) ձախ ափին գտնվող Յոնջալուի (Օմճալու, Առվտոնց) մելիքությունը, որի վերջին ներկայացուցիչը՝ մելիք Խչեն (Խաչատուրը, մահ. 1868 թ.) իր տրամադրության տակ ունեցել է հայերից և քրդերից բաղկացած ոչ մեծաթիվ զորաջուկատ<sup>49</sup>: Կցկտուր տեղեկություններ են պահպանվել նաև **Բուլանուխի Լիզ (պատմ. Լիժն)** ավանին տիրող **մելիք Բորոյի (Պորո)** մասին, որին պատկանող մոտակա բերդի ավերակները դեռևս նկատելի էին 19-րդ դարի վերջին<sup>50</sup>:

Հատուկ կարգավիճակ են ունեցել Արծկե-Ալջավազ գավառի Թարխանյան (Թարխանցի) մելիքները: Նրանց կենտրոնը Վանա լճի հյուսիս-արևմտյան ափին գտնվող **Վերին Արճրա (Արճրա)** կամ **Թարխանցի (Թարխանլու, նաև՝ Թաղանցոց գեղ)** գյուղն էր: Ըստ Հակոբ Շահբազյանի (Շահպազյան) տեղեկությունների՝ սուլթանական հատուկ իրավարտակով Թարխանյանները<sup>51</sup> ազատված էին հարկերից և օգտվում էին ներքին համայնքային ինքնավարությունից<sup>52</sup>: 19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին Թարխանյանների (Թարխանցիների) տնօրինության տակ գտնվում էին շուրջ մեկ տասնյակ գյուղեր, որոնք Վանա լճի հյուսիսային ափերով ձգվում էին մինչև Միփանի հարավային ստորոտները՝ կառավարվելով առանձին մելիքների կողմից<sup>53</sup>: Հատկանշական է նաև, որ Արծկե գավառի

47 Կեմիկցի Ալեքսանի և նրա համախոհների քաջագործությունների մասին պահպանվել են միայն կցկտուր ավանդապատումներ: Հայտնի է նաև, որ քրդական քոչվորների դեմ կռիվների արդյունքում Կեմիկն ավերվեց, իսկ նրա բնակչության մեծագույն մասը զաղթեց այլևայլ վայրեր: Տե՛ս Մշո աշխարհ, «Լուճայ», Տփլիս, 1897, գիրք Ա, էջ 183: Տե՛ս նաև՝ Ռուբեն, էջ 37-38: Տե՛ս նաև՝ Թեղիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան եւ իր հօտին 1915 աղետալի տարին, Պոստոն, 1980, էջ 111:

48 Տե՛ս «Էջմիածին» պաշտօնական ամսագիր Հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի, 1965, N Բ-Գ-Գ, էջ 183:

49 Տե՛ս Տեր-Կարապետյան, նույն տեղում:

50 Տե՛ս «Մշոյ աշխարհ», էջ 163: Տե՛ս նաև՝ Բենետ, Բուլանըխ կամ Հարթ գաւառ, «Ազգագրական հանդես», Ե գիրք, Թ., 1899, N 1, էջ 29: Լիզը Բուլանուխի արևմտյան հատվածը կազմող Ներքին Բուլանուխ գավառակի կենտրոնն էր:

51 Քանի որ արևմտահայ իրականությունում ընդունված էր տոհմանուններին ավելացնել տեղացիություն ցույց տվող «-ցի» վերջածանցը, ապա վստահաբար կարելի է ասել, որ վերոնշյալ մելիքների ազգանունը եղել է Թարխանյան (թրք. Tarhanlı, որտեղից բնակավայրի Tarhaniye անունը): Նմանապես Սարիսուի մելիքների տոհմանունը եղել է Ջիրաքյան:

52 Տե՛ս Շահպազեան Յ., Քիւրդօ-Հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 71: Տե՛ս նաև՝ ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 227, ց. 1, գ. 451, ք. 5:

53 Թարխանցիների գյուղախմբի առավել հայտնի բնակավայրերն էին Արճրան (Արճրա), Առենը և Առնջկուսը: Փաստորեն, նրանց տիրույթների մեջ էր նաև Վանա լճի հյուսիս-արևմտյան մասում գտնվող Առենի (տեղացիների բարբառով Հառնա) փոքրիկ լճակը: Այս տվյալներն անձամբ մեզ է հաղորդել ալջավազցի նախնիների շառավիղ տիկին Գայանե Ասմարյանը, որի ազգանունն առաջացել է հենց Առնջկուսի մելիք Ասմարի անունից: Բացի այդ, Գ. Ասմարյանին հայտնի էր նաև Առեն (Հառեն) գյուղի մելիք Ափրեն (Աբրահամ): Նշված տեղեկությունները նա լսել է իր տատից:

Վանա լճի առափնյա հատվածը քրդերի կողմից կոչվում էր «Ֆլստան» (իմա՝ «Հայաստան») և մինչև Մեծ Եղեռնը գրեթե զուտ հայաբնակ էր<sup>54</sup>:

Եգալի տեղեկություններ կան նույն Արծկե-Ալջավազի հյուսիսային մասը կազմող Սարխուի մելիքության վերաբերյալ: Տեղի հայկական գյուղերի կենտրոն Ջիրաքցի (Ջիրաքլու) ավանի մելիքի տրամադրության տակ կային զինված ջուկատներ, որոնք հարկ եղած դեպքում հակահարված էին տալիս 19-րդ դարի 2-րդ կեսին այստեղ լցված հայդարանցի (հայդարցի) ավազակաբարո քրդերին<sup>55</sup>: Ջիրաքյանների մելիքությունը դիմակայեց մինչև 1890-ական թթ. հայկական կոտորածները:

17-րդ դարի կեսերին հայկական մելիքություններ են եղել նաև Էրզրումի էյալեթի **Խնուս**, **Մանազկերտ** և **Քըղի (Կեղի)** լիվաների տարածքում: Հատկապես աչքի էր ընկնում Խնուսի հարավում գտնվող պատմական **Խամուրբերդի (Խամլբերդ, Ղամբաբերդ)** հայկական իշխանությունը, որը հիմնադրել էր Սասունից այստեղ տեղափոխված «Միերի տոհմը», որը հայտնի էր նաև «Մելիքենց» անունով<sup>56</sup>: Այն խիստ թուլացավ 1760-ական թթ. Խնուսի և Մանազկերտի քուրդ բեկերի միջև ընթացող արյունալի միջցեղային կռիվների ընթացքում, որոնց ժամանակ հիմնովին ավերվեցին բազմաթիվ հայկական բնակավայրեր, այդ թվում և մելիքության կենտրոն Խամուրբերդը<sup>57</sup>: Վերապրած բնակչությունը տեղափոխվեց հիմնականում Խնուս բերդաքաղաք, իսկ մելիքների ժառանգները հաստատվեցին շրջակա **Խոզլու**, **Հարամիկ**, **Կարաչոբան**, **Աղջամելիք (Խաչամելիք)** գյուղերում: Խնուսի հայերի մասին ուշագրավ տեղեկություններ են հանդիպում Պիեր Ամադե Ժոբերի «Ուղեգրություններում»: Նա, 1805-1806 թթ. կայսր Նապոլեոն I-ի հատուկ հանձնարարությամբ Պարսկաստան մեկնելիս, ի զարմանս իրեն, գավառի տարածքում առաջին անգամ հանդիպել է զինված քրիստոնյաների (իմա՝ հայերի-Գ.Բ.), որոնք, նույնիսկ Էրզրումի սերասքյար Յուսուֆ փաշայի (Բ. Դռան նախկին մեծ վեզիրը-Գ.Բ.) հրամաններն անտեսելով, թույլ չէին տվել ֆրանսիացուն ուղեկցող օսմանցի զինվորականներին մուտք գործել իրենց բնակավայրեր: Մասնավորապես, նա զարմացած էր Խոզլու(Couzli) գյուղի հայերի հանդգնությամբ, որոնք «թուրքերին ընդդիմադրություն էյին ցույց տալիս»<sup>58</sup>: Ընդ որում, Ժոբերի վկայությամբ՝ Խնուսի տարածքում 19-րդ դարասկզբին օսմանյան գերիշխանությունն ընդհանրապես անվանական էր, իսկ տեղի հայերը համատարած զինված էին և արժանի հակահարված էին տալիս վաչկատուն քրդերին՝ չվախենալով «վո՛չ սպառնալիքից, վո՛չ նախատինքից և վո՛չ էլ մահից»<sup>59</sup>: Տեղի հայ մելիքներից հարկ է առանձնացնել նաև Մելիք-Պողոսին, որի իրավասության ներքո էր գտնվում լիվայի դատական գործը<sup>60</sup>:

Խնուսի հայկական մելիքությունները պահպանեցին իրենց գոյությունը մինչև 19-րդ դարի կեսերը, երբ աստիճանաբար գավառի տարածք մուտք գործած

54 Տե՛ս Ա-Ռօ, Քիրդ ցեղապետները, «Հորիզոն», Թիֆլիս, 1914, N 288, էջ 2:

55 Տե՛ս Колобакин А. Т., Материалы..., т. 8, II, Т., 1890, с. 152.

56 Տե՛ս Մելիքեան Ե., Հարք-Խնուս, Անթիլիաս, Լիբանան, 1964, էջ 125-126:

57 Քուրդ բեկերի վայրագությունների մասին խոսում է Ղ. Ինճիճյանը: Տե՛ս Աշխարհագրութիւն..., էջ 81-83, 112: Տե՛ս նաև՝ Մելիքեան, ն. տ.:

58 Հովհաննես Հակոբյան, Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության: Ուղեգրություններ, հատոր 2, ԺՊ դարի առաջին քսանամյակ (1800-1820), Եր., 1934, էջ 208:

59 Նույն տեղում:

60 Տե՛ս Մելիքեան, էջ 126-127: Պահպանվել են նաև տեղեկություններ մելիք Աղաջանի (Խաչան) մասին, որի անունով էլ կոչվում էր Աղջամելիք (Խաչամելիք) գյուղը: Տե՛ս նույն տեղում, էջ 27:

քրդական վաչկատուն ցեղերը, օսմանյան իշխանությունների գործուն աջակցությամբ, սկսեցին հաստատվել արևմտահայերի 1829-1830 թթ. գաղթի հետևանքով ամայացած գյուղերում: Նույն ժամանակ հարևան Մանազկերտում հայտնի էր Հասանփաշա գյուղի Խչեի տունը<sup>61</sup>: Ամենայն հավանականությամբ, Մանազկերտում պետք է լինեին նաև այլ հայկական մելիքական տոհմեր, որոնք քայքայվեցին կամ ոչնչացան վերև արդեն հիշատակված միջցեղային կոնվերտի ժամանակ<sup>62</sup>: Ենթադրելի է, որ Էրզրումի էյալեթի տարածքում հայկական մելիքություն է եղել նաև Քրդիի (Կեդի) լիվայի հյուսիսային սահմանագլխին բարձրացող Առյուծ կամ Քոշոնուր լեռան շրջանում տարածվող Հանդերձիք (օտար հորջորջմամբ՝ Հանդրես կամ Ընդերես) գավառակում, որն ընդգրկում էր Բերի-սու (պատմ. Գայլգետ) գետի վերին ավազանը (այս մասում՝ Լճիկ կամ Լծիկ): Նրա կենտրոնը՝ համանուն ավանը, որը Ղ. Ինճիճյանը հիշատակում է որպես գյուղաքաղաք<sup>63</sup>, 19-րդ դարում հայտնի էր Մելիքան (իմա՝ «մելիքների գյուղ») անունով:

Այսպիսով, Վանի և Էրզրումի էյալեթների տարածքում 17-րդ դարից մինչև 19-րդ դարի կեսերը գոյություն ունեցող հայկական փոքր մելիքությունները, որպես կանոն, կառավարվել են այս կամ այն խոշոր գյուղի (ավանի) առավել հայտնի և բազմանդամ գերդաստանների կողմից, որոնք տիրում էին ընդարձակ հողատարածքների, աչքի ընկնում իրենց հարստությամբ, հետևաբար՝ մեծ հեղինակություն ունեին իրենց ենթակա բնակչության վրա: Բենսեն (Ս. Տեր-Մովսիսյան) հայ մելիքներին համեմատում է քուրդ վերնախավի՝ թռռունների (հայերեն՝ «թռն» բառից) դասի հետ, որոնք կառավարել են որևէ բնակավայր կամ ամբողջ գյուղախմբեր<sup>64</sup>: Հատկանշական է նաև, որ հայ մելիքներից շատերը տնօրինել են նաև որոշակի քանակությամբ զինված ուժերի:

### 5. Դիարբեքիի հայկական կիսանկախ իշխանությունները

Հարավային և հարավ-արևմտյան Հայաստանի մի ընդարձակ հատվածն ընդգրկող Դիարբեքիի էյալեթի հայկական կիսանկախ իշխանությունների մասին, ցավոք, շատ քիչ բան է պահպանվել: Ղ. Ինճիճյանի աշխատությունից հայտնի է, որ այստեղ ևս 18-րդ դարի վերջին - 19-րդ դարի սկզբին գոյություն են ունեցել գերազանցապես հայերով բնակեցված մանատիպ գավառներ, որոնք կառավարվել են ինքնուրույն կառավարիչների կողմից: Դրանց շարքում առանձնանում էր մասնավորապես **Իսյանը (Իսքյան)**: Մխիթարյան միաբանի մոտ հանդիպող որոշ մանրամասներ հնարավորություն են տալիս բավականին ճշգրտորեն տեղորոշել այն՝ նույնացնելով Սասունից արևմուտք, Բաթմանաջրի Մանիկ վտակի ձախավնյակում ընկած Հավեդան (Հավեդիկ) գավառակի հետ, որի կենտրոնը **Գազկե** գյուղաքաղաքն էր (Ղ. Ինճիճյանի մոտ՝ «Քասքէ»)՝<sup>65</sup>: Ընդ որում, հեղինակի լրացուցիչ տեղեկությունները ենթադրել են տալիս, որ Իսյանի մեջ են մտել նաև

61 Տե՛ս Բենսե, էջ 39: Հայկունի Ս., Բագրեւանդ ջրաբաշխ գաւառ, մասն Ա., Ս. Էջմիածին, 1894, էջ 325:  
 62 Թե ինչպիսի աղետալի ծավալներ է ընդունել քուրդ ավատատերերի միջև ծագած այդ միջցեղային պատերազմը, պերճախոս կերպով երևում է Ղ. Ինճիճյանի տեղեկություններից, որոնց համաձայն՝ Խնուսի բեկի ասպատակություններից հետո Մանազկերտում կանգուն էին մնացել հազիվ 20 գյուղեր: Տե՛ս Ինճիճեան, էջ 112:  
 63 Տե՛ս Ինճիճեան, էջ 109:  
 64 Տե՛ս Բենսե, էջ 39:  
 65 Տե՛ս Ինճիճեան, էջ 245:

**Հագրո-Միհրանիկի** և **Լըճեի (Իլիջե)** շրջանները: Ըստ էության, Իսյանը, որը Ղ. Ինճիճյանի ստուգաբանությամբ նշանակում է «սպստամբություն»<sup>66</sup>, հայ-դմիկա-քրդական միացյալ ինքնիշխան համադաշնություն էր, որը նշված ժամանակահատվածում չէր ենթարկվում Դիարբեքիի թուրք բեյլերբեյ-փաշային՝ կառավարվելով տեղական «Իսյան-ադա» տիտղոսը կրող կառավարչի կողմից<sup>67</sup>: Ուշագրավ է, որ վերջինիս զորքում տեղի մահմեդականները (ըստ Ղ. Ինճիճյանի՝ «տաճիկ») հիմնականում ծառայել են հեծելագործում, իսկ հայերը՝ հետևակում: Ընդ որում, բացառապես հայերից էին կազմված իշխանության զինված ուժերի բաղկացուցիչ մասը համարվող ռմբանետների («ռմբաձիգք, այսինքն՝ թիւֆէնկ-ճիք») ջոկատները<sup>68</sup>: Գրեթե նույն կարգավիճակն ուներ նաև Տիգրիսից հարավ գտնվող **Մավուրի իշխանությունը**, որի համանուն կենտրոնն ընկած էր Մարդինի լեռների (Տուռ-Արդին) ճյուղավորումներից մեկի արևելյան ստորոտին: Ղ. Ինճիճյանի խոսքերով՝ գերազանցապես հայաբնակ Մավուրը «ինքնագլուխ և անկախ» գավառ էր<sup>69</sup>: Ցավոք, նշված հայկական իշխանությունների վերաբերյալ մեզ հասու տեղեկությունները սրանով սահմանափակվում են: Հետագայում նշված տարածքները, գրեթե ամբողջությամբ հայաթափվելով, խիստ հազվադեպ են հանդիպում հայկական աղբյուրներում<sup>70</sup>:

Ուշագրավ փաստեր են պահպանվել Արլ. Եփրատի (Արածանի) ստորին ավազանում գտնվող Բալուի գավառի (պատմ. Բալահովիտ) հայկական մելիքությունների մասին, որոնք 18-րդ դարում - 19-րդ դարի սկզբին իրենցից բավական մեծ ուժ են ներկայացրել: Դրանցից հայտնի էին **Հավալի, Օխուի կամ Մարուճանի, Խամիշլուի (Եղեզնուտ), Նաջարանի կամ Աշմուշատի** (Ծովքի հնագույն Արշամաշատ մայրաքաղաքի շրջանը), **Պաղինի** մելիքությունները, որոնց կառավարիչները, քաղաքացիական իրավասություններին զուգահեռ, տնօրինել են նաև որոշակի ռազմական ուժերի և մշտական զինված բախումների մեջ գտնվել Բալուի տարածք ներթափանցած այլևայլ ավազակաբարո գեղերի հետ: Այս առումով հատկանշական է մասնավորապես Հավալի գյուղապետ մելիք Մարտոյի և լեռնային Դերսիմի Գժրգան (Կժիքան) դմիկական (ղզըլբաշ) ցեղի մարտական համագործակցության մասին վկայող փաստը<sup>71</sup>: Սակայն մշտական կռիվներն ու կրած կորուստները, ինչպես նաև մահմեդական նորանոր ցեղերի ներթափանցումը և ուժեղացող ճնշումը Բալուի մելիքներին ստիպեց տեղի տալ: Մեծ չափեր ընդունեցին նաև բնակչության արտագաղթը և զանգվածային, բռնի կրոնափոխությունը<sup>72</sup>: Կորցնելով իրենց ավանդական հեղինակությունը՝ տեղի հայ մելիքները վերածվեցին սովորական գյուղապետերի, թեև առավել ազդեցիկ առանձին տոհմեր մինչև 19-րդ դարի կեսերը դեռ շարունակում էին կրել երբեմնի «մելիք» տիտղոսը<sup>73</sup>:

Ավելի մանրամասն են Դիարբեքիի էյալեթի մեջ պաշտոնական ցուցակներում նշվող, սակայն իրականում լիովին անկախ Դերսիմի լեռնաշխարհի անբա-

66 Նույն տեղում, էջ 243:

67 Տե՛ս նույն տեղում, էջ 245:

68 Տե՛ս նույն տեղում, էջ 244:

69 Տե՛ս նույն տեղում, էջ 230:

70 Չարկ է նշել, որ արդեն Ղ. Ինճիճյանի ապրած ժամանակաշրջանում տեղի հայերի մեծագույն մասը մոռացել էր մայրենիին, ինչը նպաստեց նրանց արագ ուժացմանը:

71 Տե՛ս Չախսուրեան Յ., Պատմութիւն Բալահովիտի: Չնուց մինչև մեր օրերը, Պէրյուք, 1974, էջ 257:

72 Տե՛ս նույն տեղում, էջ 271, 285, 347 ևն:

73 Տե՛ս Չախսուրեան, էջ 408:

Ժանեյի մասը կազմող հայ **Միրազյանների (Միրազենք, Տեր-Օվանենք)** իշխանության մասին մեզ հասած տվյալները: Այն զբաղեցրել է Մեծուրյան լեռների մի հատվածը համարվող Տուժիկի (Դուժիկ-բաբա) հարավային փեշերին փռված դժվարամատչելի ձորահովիտների շրջանը: Ավանդության համաձայն՝ այս գերդաստանի հիմնադիր նահապետը եղել է ազնվական ծագում ունեցող Տեր-Հովհաննեսը (Տեր-Օվանը)<sup>74</sup>: Այս փաստը թույլ է տալիս եզրակացնելու, որ նշված իշխանությունը նույնպես միջնադարյան «պարոնտերության» յուրատեսակ արտահայտություն էր<sup>75</sup>: Միրազյանների նախնական կենտրոնը ավանդաբար համարվում է Դերսիմի **Տեր-Օվան** (թրք. Dere-ova, այժմ՝ Բյույուքյուրդ) բնակավայրը: Սրանից բացի, նրանց բնակավայրերը ցրված էին Տուժիկի հարավային ձորահովիտներում՝ Արլ. Եփրատի (Արածանի) Մեծուր վտակի և նրա օժանդակ Բոլոմորի գետի միջագետքում, որոնցից առավել բազմամարդ էին **Հազըսը (Էքիգ, Այգիք<sup>76</sup>), Հավլորին (Հավլորի), Չուխուրը, Թորուտը, Ծաղկին, Աղբաձորը** և այլն: Միրազյանների հոգևոր կենտրոնը համարվում էր Մեծուր (Մուհգուր-սու) գետի աջ ափին կառուցված նշանավոր **Հավլորու (Հավլորիի) Ս.Կարապետ վանքը**<sup>76</sup>: Ունենալով սահմանափակ մարդկային ռեսուրսներ (19-րդ դարում՝ 7000 մարդ), Միրազյանները մարտի դաշտ կարող էին դուրս բերել 3000-ի չափ կռվողներ, որոնք աչքի էին ընկնում իրենց մարտունակությամբ և խիզախությամբ<sup>77</sup>: Ըստ էության, Միրազյանների հայկական իշխանությունն իր ուրույն և կարևոր տեղն է ունեցել Վերին Դերսիմի կիսանկախ համադաշնության կազմում, որի զինված ջոկատները, հարևան ազատասեր դմիլկների (զազա) և առանձին քրդական ցեղերի հետ ուսուսի համատեղ պայքար են մղել օսմանյան բռնապետության դեմ՝ 19-րդ դարի ընթացքում բազմիցս ջախջախելով թուրքական կանոնավոր զորամասերը: Միրազյանների իշխանությունը գոյատևեց մինչև 1880-ական թթ., երբ աճող թուրքական բռնաճնշումների և տնտեսական ոչ բարենպաստ պայմանների հետևանքով տեղի հայերի մեծ մասը հետզհետե սկսեց վերաբնակվել հարևան Չարսան-ջակի, Խոզաթի և Մեծկերտի գյուղերում: Սրանով հանդերձ, Տեր-Օվանի լեռնահովտում մնացած Միրազյանները (Տեր-Օվանցիք) ընդհուպ Մեծ եղեռնը զենքը վայր չդրին՝ շարունակելով մաքառել թուրքական իշխանությունների և Դերսիմ թափանցած նորեկ քրդական ցեղերի դեմ:

6. Հայկական ինքնավար այլ համայնքներ

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում մինչև 19-րդ դարի կեսերը լայն ինքնավարությամբ օժտված Կիլիկիայի հյուսիսային հարևան պատմական Գամիքք (Կապադոկիա) երկրամասի հայաբնակ **Թումարզա (Տումարծա)** գյուղաքաղաքը: Կեսարիա (Կայսերի) քաղաքի հարավային կողմում վեր խոյացող նշանավոր

74 Տե՛ս Անդրանիկ, Տերսիմ: Ճանապարհորդութիւն եւ տեղագրութիւն, Թիֆլիս, 1900, էջ 67-68:  
 75 Կարծում ենք, որա օգտին է խոսում նաև «Դերսիմ» տեղանունը տեղացի հայերի հոգևոր առաջնորդ Տեր-Սիմոնի անվամբ ստուգաբանելու ավանդույթը: Տե՛ս Հալաջյան Գ., Դերսիմի հայերի ազգագրությունը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», պրակ 5, Եր., 1973, էջ 249-250:  
 76 Տե՛ս Անդրանիկ, էջ 177: Տե՛ս նաև՝ Չախսուրեան, էջ 354:  
 77 Տե՛ս Անդրանիկ, էջ 176: Տե՛ս նաև՝ Երևանեան Գ. Ս., Պատմութիւն Չարսանձագի Հայոց, Պէրոս, 1956, էջ 97: Այս իշխանական տոհմի բուն անունը եղել է Պճիենք կամ Տեր-Օվանցիք: Միրազյան նրանց կոչել են Դերսիմի բրդերը, որը բառացի նշանակում է «իշխանագին» կամ «կտրիճ, քաջ» (բրդերեն՝ «Մալե Միրո»): Տե՛ս Երևանեան, էջ 103: Տե՛ս նաև՝ Չախսուրեան, էջ 354:

Արգետս (Էրջիաս) լեռնագագաթի (3916 մ) արևելյան ստորոտին գտնվող այս հայափոժ բնակավայրը կարելի է կոչել Ձեյթունի «մանրակերտը»<sup>78</sup>: Թոմարզան, Ձեյթունի օրինակով, բաժանվում էր 4 թաղերի, ուր ժառանգաբար կառավարում էին տեղացիների կողմից «չորբաջի» տիտղոսին արժանացած, առավել նշանավոր իշխանական Դեղեյան (Տետեյան), Մաղաքյան, Թամուզյան և Գալալյան տոհմերը<sup>79</sup>: «Ավագ» իշխանների կողքին կային նաև մույն թվով «կրտսեր» կառավարիչներ, որոնք կրել են «աղա» տիտղոսը և հանդիսացել նրանց օգնականները<sup>80</sup>: Թոմարզայի հայերը, որոնք աչքի էին ընկնում իրենց մարտունակությամբ, կարողացել էին այնպիսի հարգանք ներշնչել շրջակա Հաճընի Կոզանյան (Կոզան-օղլու) ավշար թուրքմեններին և Դևելիի<sup>81</sup> Մյուսելլիմ «դերբեյ»-բռնապետներին, որ նրանք հարկադրված էին համակերպվել վերջիններիս կիսանկախ դրոթյան հետ: Դրանում, անշուշտ, բարերար ազդեցություն է ունեցել Հաճընի և, հատկապես, Ձեյթունի հայկական իշխանությունների անմիջական հարևանությունը: Նույնիսկ օսմանյան իշխանությունները մինչև 19-րդ դարի կեսը մուտք չունեին Թոմարզա: Հակոբ Յըլանջյանի վկայությամբ, «չորբաջի» - իշխաններն իրենք էին հավաքում հարկերը, որոնց մի մասն այնուհետև փոխանցվում էր թուրք փաշային<sup>82</sup>: Նման կարգավիճակ թոմարզացիներն իրենց համար ստեղծել էին ազատորեն զենք կրելու իրավունքի շնորհիվ: Մեզ հասու տվյալներից երևում է, որ անհրաժեշտության դեպքում տեղի իշխանները կարող էին հավաքագրել մի քանի հարյուր մարտիկներից կազմված զորաջոկատ: Այսպես, 1830 թվականին վերոնշյալ Դևելիի հարևան հայկական Էվերեկ (Էվերեկ-Ֆենետե, Ավերակ) ավանին օգնության հասած մարտիկների թիվը հասնում էր 500-ի<sup>83</sup>: Փաստերը ցույց են տալիս, որ գյուղաքաղաքի զինուժը կառավարվել է որոշակի ընտանիքների կողմից: Մենք հակված ենք կարծելու, որ այդ պարտականությունը եղել է «կրտսեր» իշխանական Թորոսյան տոհմի իրավասության ներքո: Դևելիի բեյերի դեմ կազմակերպված արշավանքի ընդհանուր ղեկավարն էր Գասպար քեյա Թորոսյանը, իսկ Հաճընի Կոզանյանների դեմ ուղարկված ջոկատի գլուխ կանգնած էր մույն ընտանիքի մեկ այլ ներկայացուցիչ՝ յուզբաշի (հարյուրապետ) Թորոսը<sup>84</sup>: Հատկանշական է, որ Գամիթի և Լեռնային Կիլիկիայի դերբեյությունների վերջնական հպատակեցման ժամանակ Բ. Դուռը 1860-ական թթ. օգտագործեց հենց Թոմարզայի հայկական զինված ուժերը: Ընդ որում, դրանց հավաքատեղին գյուղաքաղաքի հարավային Հայեկ թաղի համանուն բերդն էր, որը կարևոր նշանակություն ուներ Թոմարզայի պաշտպանության գործում<sup>85</sup>: Դերբեյությունների

78 Հատկանշական է, որ Թոմարզան օտարների կողմից հաճախ անվանվել է «Փոքր Ձեյթուն» («Քյուլունկ Ձեյթուն»): Տե՛ս Մատաղճեան Թ., Յուզամատեան Թոմարզայի, Պէյրոս, 1959, էջ 38:

79 Օսմանյան կայսրությունում «չորբաջի» էին կոչվում քաղաքաբնակ մեծահարուստ քրիստոնյաները: Ուշագրավ է, որ վերը նշված Գալալյաններից սերված Տեր-Կիրակոսյաններն ավելի ուշ ընդունեցին Չորբաջյան (Չորպաճյան) ազգանունը: Տե՛ս Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ (տեղագրական, պատմական և ազգագրական ուսումնասիրութիւն), Ա հատոր, Գահիրէ, 1937, էջ 854-855: Տե՛ս նաև Մատաղճեան, էջ 38:

80 Տե՛ս Մատաղճեան, էջ 44:

81 Դևելի (պատմ. հավարտանք) գտնվում է Արգետսի հարավային փեշերին՝ Թոմարզայից շուրջ 30 կմ հարավ-արևմուտք:

82 Տե՛ս Ալպոյաճեան, էջ 855:

83 Տե՛ս Մատաղճեան, էջ 170:

84 Տե՛ս մույն տեղում, էջ 143-144: 20-րդ դարի սկզբին, ի պատիվ հիշյալ անձնավորության, Թորոսյանների մի մասն ընդունեց Յուզբաշյան (Յուզպաշյան) ազգանունը:

85 Տե՛ս Մատաղճեան, էջ 42-43: Թոմարզայի մյուս թաղերն էին՝ Վերի, Վարի և Մեջի կամ Օրթա: Տե՛ս Ալպոյաճեան, նշվ.աշխ., էջ 854-855:

վերացումից հետո էլ տեղի հայ իշխանները պահպանեցին իրենց հեղինակությունն ու ազդեցությունը գյուղաքաղաքի կառավարման համակարգում: Նրանք եղել են Թոմարգայի թուրք գյուղապետ-մյուդիի խորհրդականները, ավելին՝ վերջինս գտնվում էր հայերի ազդեցության տակ<sup>86</sup>:

Նշված ժամանակաշրջանում հայկական ինքնավար համայնքների գոյությունն արձանագրված է նաև Պոնտոսի տարածքում: Ինչպես հայտնի է, մինչև 15-րդ դարի վերջը երկրամասի արևելքում՝ Պարխարյան լեռների հյուսիսային լանջերից սկիզբ առնող Ֆուռքունա գետի ձախակողմյան Մեծձոր (Համշենի ջուր) և Խալա օժանդակների դժվարանցանելի ձորահովիտներում գոյություն ուներ Համշենի (Համամաշեն) ուժեղ իշխանությունը: 1461 թ. օսմանցի թուրքերի կողմից Պոնտոսի կենտրոն Տրապիզոնի գրավումը և տեղի Կոմենենոսների կայսրության վերացումը ճակատագրական եղավ նաև հայկական իշխանության համար, որի վերջին կառավարիչը պարոն Գավիթը (Գավիթ Բ), 1489 թ. ստիպված էր հեռանալ իր տիրույթներից<sup>87</sup>: 17-րդ դարում՝ Համշենի, իսկ 18-րդ դարի 1-ին տասնամյակին՝ հարևան Սևգետի (Կարադերե, Սյուրմենե) հայության հիմնական մասի բռնի մահմեդականացումն ու ջարդը հայրենի կրոնը պահպանած հազարավոր ընտանիքների հարկադրեցին հեռանալ իրենց բնօրրաններից՝ ցրվելով ողջ Պոնտոսի տարածքով և հասնելով մինչև Նիկոմեդիա: Մեզ հասու տվյալները ցույց են տալիս, որ թեև Համշենի իշխանությունը փաստացի դադարել էր գոյություն ունենալ դեռ 15-րդ դարի վերջին, սակայն տեղում հայոց ինքնավարությունն ամբողջովին չէր ոչնչացվել: Ավելին, հեռանալով Համշենից, որոշ հայ իշխաններ իրենց բնօրրանի օրինակով նորահաստատ վայրերում կարողացել էին ստեղծել ինքնավար համայնքներ: Ցավոք, կցկտուր տվյալներ են պահպանվել միայն Իրիս (Եշիլ-ըրմաք) գետի ստորին ավազանում ընկած **Խուրշունլի (Քուրշունլու)** անկախ համայնքի վերաբերյալ: Վերջինս կազմված էր մի քանի գյուղ-«թաղերից», որոնք ցրված էին Իրիսի ձախակողմյան Ապտալ վտակի ձորահովիտներում և Մխիթարյան միաբան Մ. Բժշկյանի տեղեկություններով՝ կառավարվում էին «գորապետ» հայ իշխանի կողմից, որն իր հերթին համարվում էր Չարշամբայի դերեբեյի դաշնակիցը: Ուշագրավ է հեղինակի այն վկայությունը, որ տեղի հայերը «մարդէ ահ չունին» և «ամէնքը զինուր գրված են որդուց որդի»<sup>88</sup>: Այս փաստից կարելի է եզրակացնել, որ Խուրշունլիի հայկական ինքնավար համայնքը գոյություն է ունեցել առնվազն 17-րդ դարից, երբ այստեղ հաստատվեցին Համշենից գաղթած առաջին բնակիչները<sup>89</sup>: Համշենի իշխանության այս վերջին բեկորի մասին այլ տեղեկություններ մեզ հայտնի չեն: Ի դեպ, չի բացառվում, որ Պոնտոսի մյուս

86 Տե՛ս Մատաղճեան, էջ 44: Տե՛ս նաև՝ Ալպոյաճեան, մույն տեղում: Օսմանյան վարչական բաժանումով 20-րդ դարի սկզբին Թոմարգան մտնում էր Անկարայի (Անգորա) վիլայեթի Կեսարիայի սանջակի Դնելիի կազայի մեջ և վերջինիս Կյոսթերե (ըստ Արշ. Ալպոյաճյանի՝ պատմ. Կիզիստրա) նահիե-գյուղախմբի կենտրոնն էր: Տե՛ս Մատաղճեան, էջ 58-59:

87 Համշենի հայկական իշխանության շուրջ 700-ամյա պատմության մասին հանգամանակից տե՛ս ակադեմիկոս Լ. Ս. Խաչիկյանի ընդարձակ հոդվածը, որը «Համառոտ պատմական ակնարկ» վերտառությամբ հրատարակվել է Բ. Թոռլաբյանի համշենահայերի ազգագրությանը նվիրված հիմնարար աշխատության հետ միասին՝ «Հայ ազգագրություն և բանահյուսության» 13-րդ պրակում, Եր., 1982, էջ 7-23:

88 Մինաս վարդապետ Բժշկեան, Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեա ծով, Վենտիկ-Ս. Ղազար, 1819, էջ 49: Խուրշունլին մինչև 19-րդ դարի վերջը Պոնտոսն ընդգրկող Տրապիզոնի վիլայեթի ամենահայաշատ համայնքներից էր: Գլխավոր ավանը Մելեթն էր (Մելեթի-օյմաղը):

89 Մ. Բժշկյանը Համշենի մասին խոսելիս, նշում է, որ տեղի հայերի «մէլ մասը Խուրշունլի և Սիւրմենէ (Սևգետի շրջանը - Գ. Բ.) գնացին. Խուրշունլի գնացողները քրիստոնեայ մնացին» (էջ 97):

դերերեյությունների կազմում ևս գոյություն են ունեցել վերաբնակիչ համշենահայերի ինքնավարություններ: Մասնավորապես, առանձին փաստեր թույլ են տալիս ենթադրելու, որ նմանատիպ համայնք էր նաև Մալա գյուղը: Այդ մասին, սակայն, մեզ հասու աղբյուրները լքում են...

## Ամփոփում և եզրակացություններ

Մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չէ վերջնական ու սպառիչ կերպով ներկայացնել Արևմտյան Հայաստանի ու Լեռնային Կիլիկիայի տարածքներում և շրջակա գավառներում բազում դարեր գոյատևած կիսանկախ իշխանությունների և ինքնավար մելիքությունների կամ համայնքների պատմությունը: Արևմտահայոց շրջանում առկա պետականության վերջին բեկորների մասին բազմաթիվ փաստեր մինչ օրս անհայտ են մնում: Հետագա ուսումնասիրողները կբացահայտեն նորանոր փաստեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի ավելի ամբողջական ձևով ներկայացնել գիտական և քաղաքական մեծ հետաքրքրություն ներկայացնող այս հիմնահարցը:

Սակայն մեր ձեռքի տակ եղած տվյալները թույլ են տալիս եզրակացնելու, որ Հայոց պետականության անկումից հետո՝ մինչև 19-րդ դարի կեսերը, իսկ առանձին դեպքերում՝ ընդհուպ 20-րդ դարի սկիզբը, Օսմանյան կայսրության տարածքում գոյություն են ունեցել հայկական կիսանկախ կամ ինքնավար վարչամիավորներ, որոնցում գործել են հայկական սովորության իրավունքն ու օրենքները: Մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանում ու Լեռնային Կիլիկիայում նշված ժամանակահատվածում արձանագրվել է շուրջ երկու տասնյակ կիսանկախ իշխանությունների և ինքնավարությունների առկայության փաստը, որոնց գոյատևման առարկայական նախադրյալը երկրի դժվարամատչելի, լեռնային տեղանքն էր (Մասուն, Ջեյթուն, Հաճըն, Գերսիմի Տեր-Օվանի կամ Միրազյանների տիրույթ, Շատախ, Մոկս և այլն): Սակայն Տարոնում և Վանա լճի ավազանում նույն ժամանակամիջոցում հանդիպում են նաև դեպքեր, երբ համեմատաբար տափարակ տեղանք ունեցող գավառները նույնպես օգտվել են զգալի ինքնավարությունից և անգամ կիսանկախ կյանք են վարել: Նրանց կենսունակությունը գլխավորապես կապված էր տեղերում գրեթե միատարր հայ բնակչության առկայության, ինչպես նաև վերջինիս շրջանում պահպանված պետականության գաղափարի աղոտ գիտակցման հետ, որը հայկական ու օտար ավանդույթների յուրահատուկ խառնուրդ էր: Բացի այդ, Արևմտյան Հայաստանի որոշ գավառներում տեղի հայ մելիքները կարողացել էին օտարացեղ, հիմնականում՝ քրդական իշխանությունների հետ հարաբերությունները հաստատելու միջոցով դառնալ վերջիններիս դաշնակիցները: Առանձին դեպքերում հայկական կիսանկախ գավառների գոյության համար կարևոր է եղել որևէ խոշոր հոգևոր կենտրոնի առկայությունը, որը համախմբող դեր է խաղացել իր շրջակայքի հայության համար՝ անրապնդելով տվյալ իշխանության հիմքերը: Դրա վառ օրինակներն են հռչակավոր Սբ. Կարապետը՝ Բաղուրի մելիքության տարածքում, կամ նույնանուն վանքը Գերսիմում: Այս երևույթը, ըստ էության, դեռ մոնղոլական շրջանում հանդես եկած «պարոնտերության» յուրատեսակ արտահայտությունն էր 17-19-րդ դարերում:

Միմյանցից կտրվածության փաստը, խիստ փոքր տարածքները, սահմանափակ մարդկային և նյութական ռեսուրսները, թշնամական շրջապատը նպաստեցին հայկական մանաստիպ իշխանությունների աստիճանական թուլացմանն ու վերացմանը: Այդ գործընթացները հատկապես արագացան 19-րդ դարի 30-ական թվականներից, երբ թանգիմաթի քաղաքականության սկզբնավորման հետ միասին Արևմտյան Հայաստանի ու Լեռնային Կիլիկիայի զգալի տարածքներում, այդ թվում նաև օտարացեղ հույությունների ու դերեբեյությունների (ծորապետությունների-Գ.Բ.) դեմ պայքարում, տեղի ունեցավ օսմանյան տիրապետության վերահաստատումը:

Այնուամենայնիվ, 17-19-րդ դարերում Արևմտյան Հայաստանում ու Լեռնային Կիլիկիայում հայկական կիսանկախ իշխանությունների գոյության փաստը վկայում է, որ ոչ միայն Պարսկաստանի տիրապետության տակ Արևելյան Հայաստանում (Արցախ, Չանգեզուր, Լոռի), այլև համեմատաբար ավելի ուժեղ ու կենտրոնացած պետական վարչամեքենայով աչքի ընկնող Օսմանյան կայսրության տարածքների մեջ մտնող Արևմտյան Հայաստանում ու Լեռնային Կիլիկիայում երբեք չեն մարել Հայոց անկախ պետականության վերականգնման դարավոր ձգտումները:

## Summary

### SEMI-INDEPENDENT ARMENIAN AUTHORITIES AND MELIKDOMS IN WESTERN ARMENIA AND MOUNTAINOUS CILICIA (17TH CENTURY TO THE SECOND HALF OF THE 19TH CENTURY)

Gegham M. Badalyan

Up until the second half of the 19th century, and in separate cases even up until the end of the same century, there existed about two dozen semi-independent Armenian authorities, autonomous provinces or communities on the territory of Western Armenia. The strongest among them were the authorities in Sassun and Zeitun, whose semi-independent status was established on behalf of the Ottoman power through special edicts. The Melikdoms of Shatakh, Moks, Baghlu, the Mirakyan's of Dersim, and the authorities of Isyan and Savur also enjoyed wide autonomy, while acknowledging the supremacy of their powerful neighboring Muslim country. As a rule, these authorities were governing formations of Armenian or foreign dynasties, who were endowed with the rights of "junior ally." At the next level were a number of smaller units, whose territory was limited by one or a few settlements – the Melikdoms of the Tarkhanyans, Zirakians, Liz, and Yonjalu in Van, the Melikdoms of Khnus and Manazkert in Erzerum including also separate communities strewn throughout the territories of Southwestern Armenia, Pontos and Gamirk.